

16783

323.1(47)
u-84

2 6 SEP 2006

15 JAN 2010

ԹՈՒՐԿԱՏՆԵՐ ՍՈՅՍԵԼԻՍՏԱԿԱՆ ՓԵՊԵՐՏԵՐ
ԽՈՐՀՐԴՅՈՒՆ ՔՆՆԵՐՔԵՑՈՒԹԻՒՆ.

Պրոլետարներ քույր երկրների, միացե՛ք

№ 9

№ 9

ԽՈՐՀՐԴՅՈՒՆ ԻԾՆԱՆՈՒԹԻՒՆԸ
ԵՒ
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

(Թեզիսներ ագիտատորի համար)

Փարզ. ևս. ԵՐ. ՄԵԼԻԿ.

Советская власть и национальный вопрос в России
Перев. Ер. МЕЛИК.

Государственное Издательство. Армянская Секция.

РОСТОВСКОЕ И-Д. ОТДЕЛЕНИЕ.
1920

23.1(47)

84

13 MAY 2013

323.1 (47)

h-84

76783

ՄՐՀՐԴՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ
 ՀԱՐՑԸ ԹՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ *)
 (Թեղիներ ազխատորի համայն)

1. Կենտրոնական Ռուսաստանը չի կարող
 վար դիմանալ առանց ծայրագույնների, ո-
 նք հարուստ են հուժ և իշխելով, փառելիքով,
 արևմուտքի մթերքներով: Ռուսաստանի
 ծայրագույնները իրենց հերթին հնթարկած
 և անխուսափելի լմպերիալիստական շա-
 ստործման առանց քաղաքական, գինորա-
 ան և կազմակերպչական օգնութեան ա-
 ելի զարգացած կենտրոնական Ռուսաստանի:

2. Այս հանգամանքը, անկասկած, խոր-
 րդային իշխանութեան ծագման օրից հաշւի
 ր առնւած Անտանտայի կողմից, երբ նա գոր-
 աղրում էր կենտրոնական Ռուսաստանը չըր-

*) Աւելի մանրամասն այս առթիւ տես Ի. Տա-
 րին-ի «Политика Советской власти по националь-
 ному вопросу в России» և «Правда»-ի №
 26 և «Письма к южным партийным организа-
 циям» Известия Ц. К. П. № 24 և և:



7768-53

14-е отделение Допполиграфотдела С. Н. Х

3000 экз.

Հապատելու անասական պլանը — բաժանելով
վերջինից առ ստաւել անհրաժեշտ երկրները:
Յետադայում Ռուսաստանի անասական շրջա-
պատման պլանը մնում է անփոփոխ հիմք Ան-
ստանուայի դէպի Ռուսաստան վարած արշաւանք-
ների, սկսած 1918 թ. միջև 1920 թ.

Գրանով աւելի մեծ հետաքրքրութիւն է
ստանում կենտրոնի և Ռուսաստանի ծայրագա-
ւանների միջև մշտական միութեան ապահո-
ւութիւնը:

3. Այստեղից անհրաժեշտ է հաստատել ո-
րոշ յարաբերութիւններ, որոշ կապեր կենտրո-
նի և Ռուսաստանի ծայրագաւանների միջև, ո-
րոնք ապահովեն իրենց մէջ եղած մօտիկ և
անխորտակելի միութիւնը:

Ինչպիսին պէտք է լինեն այդ յարաբերու-
թիւնները և ի՞նչ ձև պիտի ստանան նրանք: Այլ
կերպ ասած, մըն է խորհրդային իշխանութեան
ազգային հօրցի վերաբերեալ քաղաքականու-
թիւնը Ռուսաստանում:

4. Ծայրագաւանների անջատումը Ռու-
սաստանից հակասում է ինչպէս կենտրոնի,
նոյնպէս թե՛ ծայրագաւանների ժողովրդական
մասնանների շահերին: Էլ չենք խօսում այն մտ-

տին՝ թէ ծայրագաւանների առանձնացումը կը
վնասի կենտրոնական Ռուսաստանի յեղափոխա-
կան կտրովին, իսկ սրտ հեա միասին կը թու-
լայցնի. Եւրոպայի և Արևելքի աղաաղբական
շարժումը և հենց իրենք բաժանուղ ծայրագա-
ւանները անխուսափելիօրէն կընկնեն միջազգա-
յին իմպերիալիզմի ճիրանները:

Որպէսզի բմբռնել ծայրագաւաններին ջատ-
ման պահանջի ամբողջ հակայէղափոխականու-
թիւնը՝ ներկայ միջազգային պայմաններում —
քաւական է նայել Ռուսաստանից բաժանւած
Վրաստանի, Հայաստանի, Լեհաստանի Ֆինլան-
դիայի և այլոց վրայ, որոնք արտաքուստ միայն
պահպանել են անկախութիւնը, սակայն իրա-
կանում զարձել են Անտանտայի վասսալները.
քաւական է, վերջապէս, յիշել Ուկրայնայի և
Պոլոնիայի մօտիկ պատմութիւնը, երբ առա-
ջինը կողոպտւում էր գերմանական կապիտա-
լով, իսկ երկրորդը՝ Անտանտայի:

5. Հաւատար չափով պէտք է գուրս ձգել
նաե այսպէս կոչւած ազգային-կուլտուրական
աւանդամիտն՝ որպէս կենտրոնի և Ռուսաստանի
ծայրագաւանների միութեան ձև: Աւստրո-Վենգ-
րիայի պրակտիկան վերջին 10 տարւայ ընթաց-

քում ցոյց տւեց ազգային-կուլտուրական աւտոնոմիայի անյարատելիները և անգործնականութիւնը՝ որպէս միութեան ձեւեր ազգութիւնների աշխատանք մասնակերի և բազմաազգ պետութիւնների միջև:

Ազգային-կուլտուրական աւտոնոմիայի հեղինակները՝ Շաքինգեր և Բաուէր, որոնք այժմ նստած են իրենց խորամանկ ազգային ծրագրի՝ կտրած աշտի առջև—կենդանի ազացոյց են այդ բանի: Վերջապէս ազգային-կուլտուրական աւտոնոմիայի մոնիտինգը Ռուսաստանում—երբեմնի հաշակաւոր «Բունդը», վաղուց չէինք որ ինքը ստիպւած եղաւ պաշտօնապէս ընդունել ազգային-կուլտուրական աւտոնոմիայի անպէտքութիւնը, բացարձակ յայտարարելով, որ—«Կապիտալիստական կարգերի շրջանակում առաջագրւած ազգային-կուլտուրական աւտոնոմիայի պահանջը կորցնում է իր իմաստը սոցիալիստական յեղափոխութեան պայմաններում» (տե՛ս «Բունդի XII կոնֆերենցիան» եր. 21, 1920 թ.):

6. Կենտրոնի և ծայրագաւառների միութեան միակ և նպաստակալարմար ձեւը զօւ երկրի շրջանային աւտոնոմիան է, որը սարքերուում է առանձին կենցաղով և ազգային կազմով: Այս

աւտոնոմիան պէտք է կապէ ծայրագաւառները Ռուսաստանի կենտրոնի հետ ֆեդերատիւ կապերով: Այսինքն այն սփեռական աւտոնոմիան, որ յայտարարել է Յորհրդային իշխանութիւնը հէնց իր երկան գալու տաւջին օրից և որը այժմ կեանք է մտցնում ծայրագաւառներում, ադմինիստրատիւ կամեաններում և աւտոնոմ հանրապետութիւններում:

7. Սովետական աւտոնոմիան մեռած և յարստեղ ձև չէ, այլ նա ենթակայ է ամեն տեսակի ձեափոխութիւնների և զարգացման տարրեր աւտիճանների: Նեղ ադմինիստրատիւ աւտոնոմիայից սկսած (Վոլգայի շրջանի գերմանացիք, չուվաշներ, կորեյներ), նա անցնում է աւելի լայն քաղաքական աւտոնոմիայի (բաշկիրներ, Վոլգայի շրջանի թաթարներ, կիրգիզներ), իսկ լայն քաղաքական աւտոնոմիայից էլ աւելի լայնածաւալ տեսակի (Ռեկրայնա, Թուրքեստան) և վերջապէս ուկրաինական տիպի աւտոնոմիայից՝ դէպի աւտոնոմիայի ամենաբարձր ձևին—գաշնագրային յարաբերութիւններին (Սգրբէշան): Սովետական աւտոնոմիայի այս առաձգականութիւնը նրա արժանաւոր յատկութիւններից մէկն է: Այդ առանձգականու-

Թիւնն է միայն թոյլատրում ընդգրկել իրանց կուլտուրական ու անտեսական զարգացմամբ տարբեր աստիճաններէ կանգնած Ռուսաստանի խոյտարդէտ ծայրագլուտները:

Սովետական աւտոնոմիան վերացական ու մտացածին մի բան չէ և ոչ էլ կարելի է համարել սին խոստումներէ յոյտարարութիւն:

Սովետական աւտոնոմիան ամենից ուշադրեալ և ամենախնդիրն է ծարաղաւտանների և կենտրոնական Ռուսաստանի միութեան: Այս ուր չի հերքի, որ Ուկրայնան, Ադրբեյջանը, Թուրքեստանը, Կիրգիզիան, Բաշկիրիան, Թաթարիան և ուրիշ ծայրամասերը՝ որչափ նրանք ձգտում են աշխատանքական զանդածներէ նվաճական և կուլտուրական ծագման — կարող են կառավարել աւանց մայրենի դպրոցի, աւանց դատարանի, ազմինիստրացիայի, իշխանութեան այնպիսի օրգաններէ, որոնք կազմած են զերազանցապէս տեղացի մարդկանցից: Աւելին՝ անմտութիւն է աւանց տեղական դպրոցի լայն կազմակերպութեան, գաւառումնի, վարչութեան, իշխանութեան մարմինների և այլն, ընտելութեան լեզուն ու կենցաղին ծանօթ մարդկանց — այդ նահանգները իսկական սովետիզացիայի ենթարկել, այսինքն նրանց դարձնել խորհրդային

այնպիսի երկրներ, որոնք ամուր կապւած լինեն կենտրոնական Ռուսաստանի հետ և կապմուն պետական մի ամբողջութիւն: Մայրենի լեզուով կազմակերպել դպրոց, դատարան, ազմինիստրացիա, տեղական մարմիններ — դա հէնց նշանադրւած է զործով իրականացնել սովետական աւտոնոմիան, որովհետեւ վերջինս հէնց այդ բոլոր քնստիտուտների զուգարն է՝ կերտած Ուկրայնական, Թուրքեստանի, Կիրգիզիայի և ուրիշ երկրների աւտոնոմիայի ձևերում:

Ճ. Ռուսաստանի այս երեք տարւայ ազգային հարցի խորհրդային բաղաքականութիւնը ցոյց տւեց, որ իրագործել սովետական աւտոնոմիան իր տարբեր ձևերով, խորհրդային իշխանութիւնը կանգնած է ուղիղ ճանապարհի վրայ: Միայն շնորհիւ այդ բաղաքականութեան յաջողւեց նրան իրեն ճանապարհ բանալ մինչև Ռուսաստանի ծայրագլուտների ամենայեւորնկած անկիւնները, կանչել ազգային տեսակետից խոյտարդէտ և ամենայեւորապէս մատչաններին բաղաքական կեանքի և կապել ազգ մասսաները ամենատարբեր թեւերով կենտրոնի հետ: Այս խնդիրները ոչ միայն աշխարհում որ և է պետութիւն չէր լուծում, այլ և չէր էլ գնում իր առաջ (վախենում էր գնել): Ռուսաստանի վար-

չափան սահմանադժուժները սովետական աւտո-
նոմիայի սկզբունքով դեռ ևս չի վերջացած:

9. Սովետական աւտոնոմիայի այս կամ այն
ձևի ազդարարելը, համապատասխան դեկրետ-
ների ու որոշումների հրատարակելը, նախիսկ
ծայրագաւառների կառավարութիւններ՝ որպէս
ընթացիկ աւտոնոմ հանրապետութիւնների կո-
միտարների խորհրդի — ստեղծելը դեռ ևս բաւա-
կան չեն կենդրոնի և ծայրագաւառների միու-
թեան ամբապնդման համար: Որպէսզի ամբա-
պնդել այդ միութիւնը, ամենից տառջ անհրա-
ժեշտ է լիկվիդէ անել ծայրագաւառների
այն օտարացումն ու կղզիացումը, այն նահա-
պետականութիւնն ու անկույտօրականութիւնը,
այն անստանդարտութիւնը դէպի կենդրոնը, որ ցու-
ցել է գաւառներում, որպէս ժառանգութիւն
ցարիզմի գաղանային քաղաքականութեան: Յա-
րիզմը դիտմամբ զարգացնում էր ծայրագա-
ւառներում նահապետական-ֆէոդալական ճնշու-
մը նրա համար, որպէսզի մասսաները պահէր
նորութեան և ազիտութեան մէջ: Յարիզմը
դիզմամբ բնակեցնում էր ծայրագաւառների ա-
մենալաւ անկիւնները գաղթականական էլիտեա-
ներիով նրա համար, որպէսզի ճնշէր բնիկներին
դէպի անբերրի շրջանները և ուժեղացնէր ազ-

գային ստեղծութիւնը: Յարիզմը նեղացնում էր
խիւս երբեմն փոխում տեղական դպրոցը, թա-
տրոնը, լուստարչական հիմնարկութիւնները նը-
րա համար, որպէսզի մասսաները պահէր խա-
ւարի մէջ: Յարիզմը տեղական բնակչութեան
ամենալաւ մարդկանց ձեռներէցութիւնը կասե-
ցնում էր: Յարիզմը, վերջապէս, սեղանում էր
ծայրագաւառների ժողովրդական մասունքների
գործնականութիւնը:

Յարիզմն իր այսպիսի քաղաքականութեամբ
տեղացիների մէջ ստեղծում էր այնպիսի մի
խորին անստանդարտութիւն, որ երբեմն փոխում
էր թշնամանքի դէպի այն բոլորը, ինչ որ ու-
սական էր: Կենդրոնական Ռուսաստանի և ծայ-
րագաւառների միութիւնը ամբապնդելու համար
պէտք է վերացնել այդ անստանդարտութիւնը, պէտք
է ստեղծել փոխադարձ ըմբռնողութեան և եղ-
բայրական վառահալթեան միջոցներ:

10. Այդ անստանդարտութիւնը վերացնելու հա-
մար պէտք է ամենից տառջ օգնել ծայրագա-
ւառների ժողովրդական մասսաներին ազատել
ֆէոդալ-նահապետական լծի խաղաղակցից. պէտք
է գործնականապէս և ոչ թէ խօսքով վերջա-
ցնել ամեն ինչ և միաժամանակ վերաբնակիչ

տարրերի բոլոր մենաշնորհները, հարկաւոր է ժողովրդական մասսաներին ճաշակեցնել յեղափոխութեան նիւթական բարիքներով: Անհրաժեշտ է ապացուցել մասսաներին, որ կենդանական պրոլետարական Ռուսաստանը միայն նրանց և նրանց շահերի պաշտպանն է, և այդ պէտք է ապացուցել ոչ միայն դաղթականների ու բուրժուական նացիոնալիստների դէմ ուղղած ճնշից միջոցներով, որոնք յաճախ միանգամայն հասկանալի չեն մասսաներին, այլ, ամենից առաջ, հետևողական և մտածած անտեսական բողոքականութեամբ:

11. Անհրաժեշտ է զարգացնել սեղական ազգային զպրոց, թատրոն, յուսաւորչական հիմնարկութիւններ, բարձրացնել ծայրագաւառների ժողովրդական մասսաների կուլտուրական մակարդակը—հագիւթէ հարկ լինի ապացուցել, որ ազիտութիւնը և խաւարը Պորնոգային իշխանութեան ամենավտանգաւոր թշնամիներն են:

12. Որպէսզի Պորնոգային իշխանութիւնը մօտիկ և հարապատ լինի Ռուսաստանի ծայրագաւառների ժողովրդական մասսաներին, նա ամենից առաջ հասկանալի պէտք է գտնայ նրանց համար. դրա համար անհրաժեշտ է, որպէսզի ծայրագաւառների բոլոր խորհրդային

օրգանները՝ դատարան, ազմինխաւարացիա, արեւեսութեան օրգաններ, ամմիշական իշխանութեան (նոյնպէս և կուսակցական) օրգանները կազմեն, ըստ կարելոյն, տեղացի մարդկանցից, որոնք իմանան տեղական բնակչութեան լեզուն, կեանք ու կենցաղը, սովորութիւնները. և որպէսզի դէպի այս հիմնարկութիւնները գլխաւորապէս տեղացի ժողովրդական մասսաներից ամենալաւ մարդիկ և որպէս զի տեղացի աշխատաւորական մասսաները մտնեն երկրի կառավարութեան բոլոր բնագաւառները, ինչպէս նաեւ զօրք կազմակերպելու գործում, որպէսզի մասսաները տեսնեն, որ Պորնոգային իշխանութիւնը և նրա օրգանները իրենց սեփական եռանդի, իղձերի անձնաւորումն է:

13. Պորնոգային իշխանութիւնը կատարում է աշխարհում չտեսնուած մի փորձ՝ կազմակերպելու մի շարք ազգութիւնների և ցեղերի միատեղ կատարող շինարարական գործը միացեալ պրոլետարական պետութեան շրջանակում՝ փոխադարձ վստահութեամբ և կամաւոր եղբայրական համաձայնութեան հիմունքներով: Յեղափոխութեան երեք տարիները ցոյց տւին, որ այս փորձը յաջողութեան մեծ երաշխիքներ ունի:


Սակայն այդ կարող է լիակատար յաջողութիւն աւենալ միայն այն դէպքում, եթէ տեղերում մեր ազգային գործնական քաղաքականութիւնը չառաքելուի այն պահանջներից, որոնք յայտարարւած են սովետ. աւտոնովայի կոյմից՝ փերցրած նրա տարրեր ձևերով և աստիճաններով. եթէ տեղերում մեր ամեն մի գործնական քայլը աջակցի ծայրագաւառների ժողովրդական մասսաների միանալուն պրոլետարական բարձր հողեկան և նիւթական կուլտուրայի այնպիսի ձևերով, որոնք համապատասխանեն այդ մասսաների կեցութեան և ազգային պատկերին:

Այս է կենդանական Ռուսաստանի և ծայրագաւառների յեղափոխական միութեան ամբողջական գրաւականը, և այդ գրաւականի առաջ յօդս կցնդեն Մնատանտայի ամեն տեսակի մեքենայութիւնները:

Պետական Հրատարակչութեան Հաշի. Սեկցիայի Ռուսովի Բաժանմունքի Հրատարակչութիւնները

1935 ՆՆ ՏԵՍԵԼ

- 1) Ս. Ատենեան: «Ռ՝ւր է կըլը» . . . գինը—25 ռ.
- 2) «Կոմուն. Ինտերնաց. Կոչը Պարսկաստանի, Հայաստանի և Տաճկաստանի կեդրեւած աշխատւոր գինը—5 ռ.
- 3) Ելենա Բլոնինա: «Ինչու ևս Սաւետկի Կառավարութեան պաշտպանը դարձայ» գինը—10 ռ.
- 4) Կ. Միլին: «Ովքեր են Կոմունիստները» գինը—10 ռ.
- 5) Լ. Տրոցկի: «Տես՝ սական կառուցման հերթական խնդիրները» գինը—15 ռ.
- 6) Զինովա: «III-րդ Կոմունիստ. Ինտերնաց. և մի. ջազգային հակա-յեղափոխութիւնը» գինը—10 ռ.
- 7) Պետրովսկի: «Կարմիր Դրօշակ և ազգերի հզրայութիւնը» գինը—3 ռ.
- 8) Ռուսակով: «Ռ՝վքեր են հակա-յեղափոխականները և ինչպէս կուել նրանց հետ» գինը—10 ռ.
- 9) «Խորհրդային Իշխանութիւնը և ազգային հարցը Ռուսաստանում» գինը 5 ռ.
- 10) «Ամէն մէկ գեղացիի ինչ պէտք է գիտնալ» գինը—10 ռ.



ՅԻՆ Է Ծ Ր.

Իրազմաներից ոչ որ նշանակ-
ւած գնից բարձր ծախելու իրա-
ւունք չունի:

Պետակ. Հրատ. Հայսեկ



ՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՅՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՅԿԵՆ.
ՊԱՅՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՍՈՒԹՅԸ.

Государств. издат. Арм. Сек. Ростовской и-Д. отделение

1920

Р. 4В. 111.

Հ
7
ՀՀ Ազգային գրադարան



NL0199869

